

ԱՐՉԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 04
վիճակագրության պետական խորհրդի նիստի

03.03.2009թ.

Ժ.11: 00

Մասնակցում էին՝

Ս.Մնացականյան (*խորհրդի նախագահ*), Գ. Անանյան, Գ.Գևորգյան, Յու.Պողոսյան, Ա.Շաբոյան, Ա.Աղազարյան (*խորհրդի անդամներ*)

Հ. Գրիգորյան (*խորհրդի քարտուղար*)

Հրավիրված էին՝ Լ.Միրզոյան (ՀՀ ԱՎԾ նախագահի տեղակալ), Ս. Պողոսյան (իրավաբանական բաժնի պետ), Լ. Պետրոսյան (վիճակագրական աշխատանքների մեթոդաբանության և դասակարգիչների բաժնի պետ), Դ.Մարտիրոսովա (տնային տնտեսությունների հետազոտությունների բաժնի պետ):

Օրակարգի նախագծում՝ երկու հարց.

1. «2009թ. ապրիլի 1-ից դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում Տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտություն» հարցաթերթը հաստատելու և Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2008թ. դեկտեմբերի 5-ի թիվ 42-Ա որոշման հավելվածով հաստատված հարցաթերթը ուժը կորցրած ճանաչելու մասին» հարցը:

/Չեկուցող՝ Դ.Մարտիրոսովա/

2. Այլ հարցեր:

ՀՀ վիճակագրության պետական խորհրդի նախագահի կողմից ներկայացվեց խորհրդի նիստի օրակարգի նախագիծը, որը հաստատվեց ամբողջությամբ և միաձայն:

/Բվեարկության արդյունքները-կողմ՝ 6, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/

Լսեցին՝

1. «2009թ. ապրիլի 1-ից դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում Տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտություն» հարցաթերթը հաստատելու և Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2008թ. դեկտեմբերի 5-ի թիվ 42-Ա որոշման հավելվածով հաստատված հարցաթերթը ուժը կորցրած ճանաչելու մասին» հարցը:

/Չեկուցող՝ Դ.Մարտիրոսովա/

Որոշեցին՝

հաստատել 2009թ. ապրիլի 1-ից դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում իրականացվելիք «Տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտություն» հարցաթերթը՝ համաձայն հավելվածի և ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2008թ. դեկտեմբերի 5-ի «2009 թվականի հունվարի 1-ից դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում իրականացվելիք տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտության հարցաթերթը և օրագիրը» հաստատելու մասին» թիվ 42-Ա որոշման հավելվածով հաստատված հարցաթերթը:

/Անհատական/

/Բվեարկության արդյունքները- կողմ՝ 6, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/

ՆԱԽԱԳԱՀ

Ս. ՄՆԱՅԱԿԱՆՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ

Հ. ԳՐԻԳՈՐՅԱՆ